ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

29 հոկտեմբեր, 2014թ. ք. Երևան

ՀՀ 2014-2018թթ. հակակոռուպցիոն ռազմավարության նախագծի քննարկում Սյունիքի մարզում

2014 թվականի հոկտեմբերի 29-ին Կապանում կայացավ ՀՀ 2014-2018թթ. հակակոռուպցիոն ռազմավարության նախագծի հանրային քննարկում՝ Սյունիքի մարզի ՔՀԿ-ների մասնակցությամբ: Այն կազմակերպվել էր ՀԵԻԱ-ի կողմից՝ Եվրոմիության կողմից՝ ֆինանսավորվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի շրջանակներում:

Ողջույնի խոսքով հանդես եկավ ՀԵԻԱ-ի գործադիր տնօրեն, «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի համակարգող/դրամաշնորհների պատասխանատու Արտակ Սարիբեկյանը և «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի ռեգիոնալ համակարգող Անի Ասատրյանը:

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի ազգային փորձագետ Մարատ Ատովմյանը և միջազգային փորձագետ Քարլ Ուլբրիխտը ներկայացրեցին հակակոռուպցիոն ռազմավարության նախագիծը, ապա խոսվեց անկախ հակակոռուպցիոն մարմնի ստեղծման ու ապօրինի հարստացման քրեականացման անհրաժեշտության մասին, որից հետո մասնակիցները ներկայացրեցին իրենց կարծիքներն ու առաջարկությունները:

«Կապան քաղաքացիական շարժում» կազմակերպության ներկայացուցիչ Դավիթ Հակոբյանի կարծիքով վերջին տարիներին մշակված հակակոռուպցիոն ռազմավարության քաղաքականությունը եղել է շատ անարդյունավետ և եթե եղել է որևէ փոփոխություն, ապա միայն դեպի վատը: Վերջինս գտնում է, որ դրա պատճառը ոչ միայն պետական մարմինների, այլ նաև հասարակական կազմակերպությունների թերի աշխատանքն է, իսկ իրական փոփոխություններ արձանագրելու համար նախ պետք է լինի քաղաքական կամք իշխանությունների կողմից ու հետո արդեն հասարակական կազմակերպությունների դերն ու նշանակությունը ակնհայտ կդառնա:

«Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ-ի ներկայացուցիչ Հրայր Խաչատրյանի կողմից հարց բարձրավեց այն մասով, թե ինչու նախագծի մեջ մանրամասն նշված չեն այն չափանիշները, որոնց հիման վրա թիրախավորվել են կոնկրետ 4 ոլորտներ, ապա առաջարկեց ստեղծվեն անկախ հակակոռուպցիոն մարմիններ, որոնցից յուրաքանչյուրը պատասխանատու կլինի կոնկրետ մի ոլորտի համար, քանի որ միայն այդպես հնարավոր է արդյունավետ պայքար տանել:

«Կապանի կանանց տարածաշրջանային ասոցիացիա» ՀԿ-ի ներկայացուցիչ Սուսաննա Մարտիրոսյանը փաստեց, որ անհրաժեշտ է փոխել նախևառաջ մարդկանց մտածողությունը, հասարակության իրավական իրազեկությունը ցածր է: Տիկին Մարտիրոսյանը համարում էր, որ փոփոխություններ արձանագրելու համար պետք է սկսել երեխաներից, այսինքն դպրոցներից և դա կարելի է անել կրթական ծրագրերում հակակոռուպցիոն դասընթացներ ներդնելով: Նշենք, որ առաջարկին միացավ նաև «Սյունիքի դպրոցականներ» ՀԿ-ի ներկայացուցիչ Արթուր Հակոբյանը:

Իսկ «Կենի» ՀԿ-ի ներկայացուցիչ Գարեգին Գաբրիելյանը հանդես եկավ Հայաստանում ապօրինի հարստացման քրեականացման հարցի մասին իր տեսակետով: Նա նախ ցանկացավ իմանալ, թե ինչպիսի սահմանաչափն է որակվելու որպես ապօրինի հարստացում, ապա ասաց, որ միայն խնդիրը քրեականացնելով լուծում չի տրվի, անհրաժեշտ կլինեն նաև հստակ մեթոդներ օրենքի կիրառման համար:

Ծրագրի հիմնական նպատակն է մեծացնել ՔՀԿ-ների դերը հակակոռուպցիոն բարեփոխումների խթանման և իրականացման գործում: Ծրագրի շրջանակներում կհզորացվեն ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների մոնիթորինգի և վերահսկողության կարողությունները: Կկազմակերպվեն հակակոռուպցիոն դասընթացներ ՀՀ մարզերում ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների համար՝ կոռուպցիոն բնույթի և տեղեկատվության ազատության խնդիրներն առավել լավ ըմբռնելու համար: Այս միջոցառումների նպատակը հակակոռուպցիոն գործողությունների իրականացման առկա հնարավորությունների խորացումն է: Հանրային վերահսկողության արդյունավետության բարձրացման և համապատասխան մոնիթորինգային, վերահսկողական և հետաքննական ծրագրերի իրականացման նպատակով կտրամադրվեն փոքր դրամաշնորհներ: Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մեխանիզմների ամրապնդման համար ՔՀԿ-ների մասնակցությամբ կմշակվի ՔՀԿ-կառավարություն կայուն երկխոսություն:

Ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսական օժանդակությամբ՝ «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի կողմից (իրականացնող)՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ (գործընկեր): Ծրագրի տևողությունը 3 տարի է (2014 թվականի հունվարից 2016 թվականի դեկտեմբեր): Ծրագրի բյուջեն կազմում է 650.000 եվրո:

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան (ՀԵԻԱ) ստեղծվել է 1995թ.-ին: ՀԵԻԱ-ի առաքելությունն է նպաստել Հայաստանում իրավունքի գեր[illegible]ն, ժողովրդավ[illegible]ացիա[illegible]ության կայացմանը, որտեղ բնակչությունը իրազեկ է, իսկ նրա իրավունքները՝ պաշտպանված:

Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմին է:

Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոու-հաուն, ռեսուրսներն ու ուղիները: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ:

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա
Հասցե Նալբանդյան 7, բն. 2
Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս: +37410 54 01 99
Հեռապատճեն: +37410 58 02 99

Ինֆորմացիայի ազատության կենտրոն
Հասցե Բուզանդի 1/3
Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս: +37410 56 03 60
Հեռատճեն: +37410 56 03 60

Ծրագիրը ֆինանսավորվորվում է Եվրոպական միության կողմից

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն
Հեռախոս +37410 54 64 94
Հեռապատճեն +37410 54 64 95